ինձ այսօր ձերոց թարգմանեալ զէնշքըլիքայն մարգարտաշար նոտր և բոլոր և երկաթագիր տառիւք յոյժ գովելի և շնորհալի զոր մինչև Պապն տեսեալ է, որպէս մասունք պահեն զնա։ Նաև այսօր նոյն մօնսինեօրն պարգևեաց ինձ զբազում գրեանս որք են հարկաւորք ինձ. այլ և նորապէս գրեաց յետ էնշքըլիգային ներկայ Պապն, որք հայկ[.] քահանայք ոչ ոք կարէ այսուհետև հրչակել զերիս պատարագս յաւուր Ծննդեանն տեառն մերոյ փրկչին, որ է տասն թուղթք դալիանաբար. զսա ևս հարկաւոր է թարգմանել վասն հարկաւորութեան մերոյ զարմիս և այլն։ Արդ կարծեմ թէ լաւ եղև վասն Ծիսին մերոյ ոչ կարել պատարագել զերիս որ եղէ ես պատճառ, վասն զի յամենայն Բրիմա Կլասի տօնիցն լաթենացւոյ հրաւիրեալ գնամ առ սուրբ Պետրոսի Պապական յեկեղեցի ի դասն չարս եպիսկոպոսաց և մանաւանդ ի գիշերի Ծննդեանն։ Եւ յայսմ ամի հ[իւ]րասի[րե]ցաք ի սանդայ մարիայ Պապական յեկեղեցւոյ և յետ ամենամեծ հանդիսութեան պատարագեցի զմի միայն պատարագ անդ, վասն պատուիրանի էնշքըլիգային, և յայսմ միջոցս ի ալիկուրնա ևս էանց վէճ վասն երիս պատարագին. զայս ամենայն լուաւ պապն վասն այսորիկ գրեաց և այլն. ողջ լերուք ի տէր հանդերձ միաբանիւք ձերօք։

Մնամ պատրաստական ըստ ամենայնի

1756 յապրիլի 3 — Յակոբոս Մեսրոբ
[Հռովմ] — չնչին Արքեպիսկոպոս Լամբրոնի

ՃՁԷ.

Մծբնայ հայրապետին շուրջ է դարձեալ հետևեալը. անշուշտ տպագրութեան գործին հետ ունեցած կարևորութեան համար։

Գերյարգելի Ցեառն տեառն Աբրայ Հօրդ մերոյ ողչոյն ի տէր

Ցայտ լիցի ընդ այսու թղթով եղև երեք զօրս գրեցի առ ձեզ, զպատասխան զոչ ընկալայ. բայց զայս գրեցի հրամանաւ մօնսինեօր Անթօնելլին առ ձեզ։ Քանզի յոյժ խնդիր է ի նմանէ վասն վարուցն և սքանչելութեանց և ձեռնադրութեան, նաև զԱզգատոհմն ամենայն սրբոյն Յակոբայ Հօրքեռորդայն մերոյ լուսաւորչին Գրիգորիոսի, նաև յորում ամի ձեռնադրեցաւ և յումմէ զայս ամենայն խնդիր է ի նմանէ և ինձ ասաց գրեա սակս ձեր Ցարգելութեան և այլն։ Եւ ես ըստ կարեաց իմոց արտահանեալ եմ վասն կենաց և վարուցն նորա ի գրքէն սուրբ Սուրբ Գրիգոր Նարեկացւոյ, և ի Զէնօբէ, և ի Մօսէս Քերթողէ, և ի սուրբ Ներսէս Շնորհալւոյ։ Բայց այսմաւորք և այլք պատմագիրք զոչ ունիմ։ Ուստի մեծ է աղաչանք յինէն և ի նմանէ առ յղել ասա զխնդրեալս որպէս ի վերայ. ի փառս սրբոյն և ի պարծանս զարմիս մերոյ ողջ լերուք ի տէր։

Մնամ ըստ ամենայնի քում

1756 յապրիլի 10 — Ծառայ Քրիստոսի
[Հռովմ[— Քեհեայ [Արքեպս.] Արապ օղլու չնչին

ՃՁԸ.

Նորէն Սարաֆեանի մասին տեղեկութիւն մը։ —

Կը յիշուի նաև Նալեանի հրատարակելի մէկ գիրքը ընդդէմ Մխիթար Աբբահօր։ Թ·է ասոր և թէ առաջնոյն նկատմամբ Հ. Զաքարիա ևս տեղեկագրութիւններ ունի ապրիլ 18–ի գրով մը։